


Մանուկներու Սուրբ Գիրքը  
կը ներկայացնէ

Պատանդ  
Դանիէլ



Written by: Edward Hughes

Illustrated by: Jonathan Hay

Adapted by: Mary-Anne S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation  
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

[www.M1914.org](http://www.M1914.org)

©2020 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,  
as long as you do not sell it.



Դանիել եւ իր երեք ընկերները Իսրայել կ'ապրէին:  
Օր մը հզօր թագաւոր մը եկաւ իրենց երկիրը եւ  
բոլոր խելացի երիտասարդ մարդիկը իրենց երկրէն  
հեռացուց եւ իր երկիրը տարաւ: Թագաւորին  
անունը երկար եւ մեծ անուն էր Նաբուգոդոնոսոր  
եւ ան շատ-շատ հեռու երկրի մը մէջ կ'ապրէր, որ  
Բաբելոն կը կոչուէր:




Երիտասարդ մարդիկը շատ լավ կը խնամուէին  
Բաբելոնի մէջ: Թագաւորը ամենէն փայլուն,  
խելացի եւ ամենալաւ երիտասարդները զատած  
եր ամբողջ աշխարհէն: Ան ծրագրեց, որ անոնց  
սորվեցնէ Բաբելոնի լեզուն, որպէսզի անոնք  
դառնան ծառաները եւ օգնեն զինք  
թագաւորութիւնը կառավարելու համար:




Ուտելիքը լաւ էր: Երիտասարդ մարդիկը կերան  
ինչ որ թագաւորը կ'ուտէր: Բայց Դանիէլ եւ իր  
ընկերները կը մերժէին ուտել, որովհետեւ այդ  
ուտելիքները նուիրած էին սխալ աստուածներու:  
Դանիէլ խոստացաւ, որ որեւէ սխալ բան մը չգործէ  
իր Աստուծոյ դէմ: Իսրայէլի Աստուածը հրամայեց  
իր ժողովուրդը որպէսզի երբեք չպաշտէր սխալ  
աստուածներ  
եւ կուռքեր:



Դանիել խնդրեց իր ուսուցիչէն, որպէսզի արտօնէ  
զինք, որ ան թագաւորին ճաշէն չուտէ: Եթէ  
թագաւորը գիտնայ պիտի բարկանայ: Բայց  
Աստուած Դանիելը այդ մարդուն նախընտրելին  
դարձուց:



Ան համաձայնեցաւ Դանիէլի եւ իր ընկերներուն  
քննութենէ անցնել: Տասը օր անոնք միայն ջուր  
պիտի խմէին եւ միայն բանջարեղէն պիտի ուտէին:  
Տասը օր ետք Դանիէլ եւ իր ընկերները շատ ամէլի  
առողջ երեւցան, քան անոնք, որոնք թագաւորին  
ուտելիքէն կ'ուտէին: Ուրեմն անոնց արտօնուեցաւ  
բանջարեղէնով եւ ջուրով շարունակել:



Այս երիտասարդ մարդիկը պատուեցին Աստուծոյ  
եւ Աստուած անոնց պատուեց: Աստուած անոնց  
տուլալ գիտութիւն եւ վարպետութիւն իրենց  
սորված մարզերուն մէջ եւ Ռանիէլ ստացաւ  
խելացիութիւն հասկնալու ամէն տեսիլքները  
եւ երազները:







Երեք տարիներ ետք  
Բաբելոնի դարոցին մէջ  
ամեն երիտասարդ մարդիկը  
ներկայացան Նաբուգոդոնոսոր  
թագաւորին: Ան Դանիելը եւ իր  
երեք ընկերները ընտրեց իբր  
ամենալաւը բոլորին մէջէն:  
Իրաւ, թագաւորը գիտցաւ, որ  
Դանիել շատ աւելի  
խելացի էր քան բոլոր  
մարդիկը իր  
թագաւորութեան  
մէջ:



Գիշեր մը, թագաւորը գէշ երազ մը տեսաւ: Ան կանչեց իր կախարդները, աստղագետները եւ ըսաւ անոնց. "Երազ մը տեսայ, եւ իմ հոգիս կ'ուզէ գիտնալ, թէ ինչ է նշանակութիւնը":

Խելացի մարդիկը պատասխանեցին. "Օ՛, թագաւոր, յաւիտեան ապրիս:

Պատմէ

եզարդ

ծարաներուդ

եւ մենք

քեզի կը

թարգմանենք

նշանակութիւնը":



Թագաւորը պատասխանեց. "Ոչ: Պէտք է որ ինծի  
ըսէք, թէ ինչ էր իմ երագիս նշանակութիւնը: Եթէ  
չկատարէք կտոր-կտոր պիտի ընեմ  
ձեզի եւ ձեր բնակարանները պիտի  
այրեմ: Բայց եթէ ըսէք ինծի  
երագիս նշանակութիւնը, -  
շարունակեց թագաւորը.-  
պիտի ստանաք նուէրներ  
եւ մեծ պատիւ": Անշուշտ  
որեւէ մէկը այս  
խելացի  
մարդոցմէ  
չէր կրնար  
թագաւորին  
երագը բացատրել:



Թագաւորին խելացի մարդիկը ըսին թագաւորին:  
"Մարդ մը չկար աշխարհի վրայ, որ կրնայ  
կատարել քու պահանջքդ: Միայն աստուածները  
կրնան, եւ անոնք երկրի վրայ չեն բնակիր":  
Թագաւորը շատ զայրացաւ. "Քանդեցէք բոլոր  
խելացի մարդիկը Բաբելոնի", հրամայեց  
ան:



Երբ գինուորները Դանիելի  
եկան, ան Արիովքի, թագաւորին  
հրամանատարին, ըսաւ. "Ինչո՞ւ  
թագաւորը կը կործանէ ամեն  
խելացի մարդիկը", ետքը  
Արիովք ըսաւ Դանիելի ամեն  
ինչ որ պատահէր էր: Դանիել  
գնաց տեսնելու թագաւորը:  
Ան անելի ժամանակ  
խնդրեց թագաւորէն,  
որ երազին ճիշդ  
բացատրուիինը  
տայ:



Յետոյ Դանիել իր տունը գնաց,  
եւ ամէն ինչ իր ընկերներուն  
Սեդրակի, Միսաքի եւ  
Աբեդնագովին պատմեց: Դանիել  
չէր գիտեր երագին իմաստը, բայց  
գիտէր, որ մէկը ամէն ինչ գիտէ:  
Այդ մէկն ալ Աստուած էր: Ուրեմն  
Դանիել եւ իր ընկերները  
աղօթեցին:



Աստուած Դանիէլի ցոյց տուաւ երագը եւ  
անոր իմաստը: Դանիէլ փառք տուաւ երկնքի  
Աստուծոյ ըսելով. "Օրհնուած է Աստուծոյ անունը  
յաւիտեանս յաւիտենից, որուն է արքայութիւնը եւ  
խելացութիւնը":



Դանիել շտապեց թագաւորին քով եւ ըսաւ. "Երկնքի մէջ Աստուած մը կայ, որ ամէն ինչ կը բացատրէ": Ան թագաւորին բացատրեց, թէ ինչ երազեց եւ թէ այդ ինչ նշանակէ:





Երբ Նաբուգոդոնոսոր թագաւորը իմացաւ երազը  
եւ անոր բացատրութիւնը, ան Դանիէլի առջեւ  
իսկաւ եւ ըսաւ. "Իրաւ քու Աստուածդ,  
աստուածներուն Աստուածն  
է եւ Տէրը թագաւորներուն եւ  
գաղտնիքներու բացայայտողը,  
որ կրցար այս գաղտնիքը  
բացատրել", ետքը  
թագաւորը  
Դանիէլը  
կարեւոր  
մարդ դարձուց  
եւ իրեն մեծ  
նուէրներ  
տուաւ:



Անոր կառավարիչ հռչակեց  
ամբողջ Բաբելոնի վրայ եւ բոլոր  
խելացի մարդոց պետը:



# Պատանդ Դանիել

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Դանիել 1 - 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

